

երեսին վրայ կան չորս տաշտածեւ պատուանդանաւոր ճրագներ, որոցմէ ստորոտն ալ շարուած կան շուրջանակի՝ եւ իրարու կից (Ճրք. Գ, 79): Այս կաւեղէն ու պարզ սպասը սակայն ռամիկ տներու սեպհական կը թուի:

Իսկ մեր այդ ճրագաց իւրաքանչիւրին մէջ կը վառի «պատրոյզ» մը, դրուած «իւղի» կամ «ձիթոյ» մէջ (Եղիշ. 195. Նար. 247), զոր կը մզէին կտաւատէ, կնճթէ կամ ընկուզէ (Գոշ՝ Առկ. 44, 50):

8. — Սպասաւորք: — Այս պահուս ժիր գործունէութիւն մը կ'երեւի տան մէջ: Բոլոր պաշտօնեայք, որոց թիւն անշուշտ կախումն ունէր ճաշարանի կարեւորութենէն եւ հրաւիրելոց բազմութենէն, հետամուտ են իւրաքանչիւր ծառայութեան: Սեղանայարարք¹ կամ սեղանայօրէկք² իրենք իսկ կը պատրաստեն ու կը զարդարեն տաճարը: — Հացեփեացք³, կամ ազնուականաց քով յատուկ «հացարարք որոշեալ ի պէտս սպասու ըստ ազատաց կարգի⁴», արդէն հանած են թոնրէն իրենց քաղցրաբոյր հացերը (աստ, 34), եւ ամփոփած սակառներու եւ կամ զամբիղներու

1. Ոսկ. Թղթ. Ա, 532, 816. — 2. Ոսկ. Մտթ. Բ, 69. — 3. Ա. Թագ. Ը, 13. — 4. Եղիշ. 173. Տար. Վերլծ: Հոովմայեցի ազնուականք ալ ունէին սեպհական հացարարներ, խոհակերներ ու ծաղարարներ (Վար. Ա, 1277):